01/10.4/5447-09

2009-08-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. 1-ին հոդվածով լրացվող 49.1-ին հոդվածի՝

1) առաջին պարբերությունն անհրաժեշտ է հանել, քանի որ այն հակասում է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետով, 28-րդ հոդվածի 7-րդ մասով և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բարձրագույն ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարության սկզբունքին։ Ելնելով նշված սկզբունքներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ 2009/2010 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական

ծրագրով տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» N 401-Ն որոշման 3-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է տվյալ տարվա կրթության կամ կրթական ծրագրերին հատկացվող գումարի չափը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն «բարձրագույն ուսումնական հաստատության և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում՝ այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն»: Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի ուսանողների ուսման վարձի չափը սահմանելու դեպքում պետությունը ոչ միայն կսահմանափակի բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավարությունը, այլև անհարկի կմեծացնի բուհի գործունեության ռիսկայնությունը.

2) 2-րդ մասով նախատեսված հարաբերությունները կարգավորվում են տվյալ ոլորտները կարգավորող առանձին օրենսդրական ակտերով, հետևաբար դրանք անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի

իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները.

3) 3-8-րդ մասերով նախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով, ինչն առավել ճկուն է կարգավորում այդ հարաբերությունները։ Անհրաժեշտության դեպքում կարելի է փոփոխություններ կատարել կարգում։

2. 2-րդ հոդվածի առաջին պարբերությունն անհրաժեշտ է հանել, քանի որ նշված հարաբերությունները կարգավորվում են «Բարձրագույն և հետբուհական մասնագի-տական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով։

3. Հաշվի առնելով օրենսդրական տեխնիկայի կանոնները՝ անհրաժեշտ է՝

1) 1-ին հոդվածով լրացվող 49.1-ին հոդվածի 8-րդ մասում հստակեցնել «փոխհա-տուցման այլ չափերի» արտահայտությունը.

2) 2-րդ հոդվածով նախատեսված 49.2-րդ հոդվածի՝

ա. 6-րդ մասում «3-րդ ենթակետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «3-րդ մասում» բառերով,

բ. 9-րդ մասի համարակալումը վերանայել.

3) վերանայել 3-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետը։

4. 1-ին հոդվածով նախատեսված ուսման վարձի փոխհատուցման չափերը ենթադրում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ֆինան-սական հատկացումների անհրաժեշտություն, սակայն Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի

պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներում այդ նպատակով գումարներ նախատեսված չեն։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ՀՀ Ազգային ժողովում ներկայացված օրենքի նախագիծը քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ